

ՄԱՍՆ ԵՐՐՈՐԴ

ԸՆԹՐԻՔ ՎԱՆԱԿԱՆԱՅ

Աշխարհիկ ճաշերէն եւ անոնց արգասիքներէն վերջ՝ պատշաճ է որ նկատենք կերակրոց հանգամանքն այն դասուն, որ հրաժարած աշխարհի հաճոյքներէն, ժուժկալութեամբ կը մաշէի իւր օրերն Հայաստանի մենաստանաց եւ անապատից մէջ: Տարբեր կեանք մը հարկաւ տարբեր սնունդ մ'ալ պիտի ունենար:

1. — Թիւ ձաշի: — Մեր կրօնաւորք հին սովորութեամբ օրը մի անգամ միայն կերակուր կ'առնուին. սովորութիւն՝ որ կը ծագէր միւս ազգաց մենաստաններէն իսկ (Ոսկ. Թղթ. Ա., 127, 815. Վարբ Հրց. Բ., 548): Այսպէս կ'ընէին նաեւ Եղիշէի յիշատակած «հարաւային» միանձունք (214), զորս գտնելու համար մեր միտքը դէպ Եգիպտոս կը ձկտի. զի մեր պատմչի նկարագրին մէջ Փիլոնի խօսքերն, որոցմէ ներշնչուեր է, յայտնապէս քրիստոնէա-